

Meillet<sup>3</sup> p. 622; Adjarian III 276 ff. Wir haben hier das gemeinidg. Wort für „Joch“ vor uns: ai. *yugám*, gr. *ζυγόν*, lat. *iugum*, got. *juk*, ahd. *iuh*, *joh*, gall. *Veriugo-dumnus*, kymr. *iau* f., lit. *jūngas*, aksl. *igo*, heth. *jugan* „Joch“. Das Armen. nimmt innerhalb aller anderen Sprachen eine isolierte Stellung durch seinen singulären Anlaut *l-* ein<sup>31</sup>.

(Fortsetzung folgt.) Georg R. Solta.

**ՅՈՒՑԱԿ ԹԵՂԵՆԻ ՀՈՅԵՐԷՆ  
ՉԵՌԱԳԻՐՆԵՐՈՒՄ**

**1.**

**Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն**

ԹՈՒՂԹՒՆ՝ 321: — ՄԵՏՈՒԹՒՆ՝ 21 × 14: — ԳՐՈՒԹՒՆ՝ 13 × 4.5 + 4.5 = 9: — ՏՈՂՔ՝ 21: — ԹԵՐԹՔ՝ 62ամակում, 25: — ՆԻԹՔ՝ բուրբ, բխագոյն, ամուր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական շատ վնասում, բայց նորոգում եւ լաւ վիճակի բերում: — ԿԱՁՄ՝ տախտակ, վրան Թախիչ անցում եւ անոր վրայ արծաթեայ բերք փառում ու խաչով պաւկում: Փակակները՝ շրթայ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: — ԳԻՐ՝ բոլորգիր, յստակ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագոյն: — ՁԱՐԴԱԳԻՐՔ՝ բոլորգիր, սիրուն եւ գունաւոր: — ԼՈՒՍԱՆՅԱՁԱՐԴՔ՝ շատ, պարզ, գոյնզոյն: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ չունի: — ԽՈՐԱՆՔ՝ իւրաքանչիւր Աւետարանի սկիզբը, պարզ եւ երկնաւար: — ՆԿԱՐՔ՝ ք. 5ա. Ոսկուայ, ք. 5բ.

<sup>31</sup> Bugge, KZ 32 (1893), p. 8f. und Lidén bei Walde-Hofmann a. O. wollen *luc* durch Einfluß von *lucanem* „löse, spanne aus“ erklären, eine Deutung, die Adjarian III 276 nicht annimmt. Ernout-Meillet verweisen auf das Verhältnis von ai. *yákr* „Leber“ zu arm. *leard*, cf. unten B 40. Die Vertretung des idg. Halbvokals *i* ist im Armen. wie im Griech. nicht einheitlich; cf. etwa Meillet, *Esquisse*<sup>2</sup>, p. 52 und Schwyzler, *Griech. Grammatik*, I (1934), p. 303, 331 mit Literatur. Einen geistreichen Erklärungsversuch macht Cuny, *Recherches sur le vocalisme etc.* (1943), p. 67 mit Anm. 1, indem er verweist auf einen möglichen Zusammenfall von *i* und *ĩ* im Armen., der sich aus dem heutigen Franz. erläutern läßt: „il y a du poisson“ klingt im vulgären Pariserisch: *ya du poisson* (ib. Anm. 1).

<sup>1</sup> Այս ձեռագիրները ցուցակագրած եմ 1949 հոկտեմբերին, երբ կը գտնուէի Թեհրան:

2. 2. ՈՍԿԵԱՆ

Խաչիւրքիւն, ք. 6ա. Բաղուսն, ք. 6բ. Էջի Լիւպու, ք. 7ա. Աւետումն, ք. 8ա. Յարուրիւն, ք. 18բ. Մարտէոս, ք. 107բ. Մարկոս, ք. 165բ. Ղուկաս, ք. 254բ. Յովհաննէս, գոյնզոյն եւ պարզ: — ԴԱՏԱՐԿՔ՝ շատ մը բարբեր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժ. 2—ժ. 2 դար: — ԳՐԻՉ ԵՒ ՏԵՂԻ՝ անձանք: — ՍՏԱՅՈՂ՝ Խօջա Գաւուր: — ԿԱՁՄՈՂ ԵՒ ՆՈՐՈԳՈՂ՝ (վերջին) Յովհաննիս եւ Ղազար: — ԿՆԻՔ՝ ք. 12բ, 13բ. «Քրիստոսի ծառայ Տէր Պետրոս» եւ ուրիշներ, այսպէս՝ ք. 254բ. «Բ. Մ. Տր. Մ. Ս.»: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՒՆՔ՝ ք. 318ա: — ՏԵՂԵԿՈՒԹՒՆՔ՝ Բուրվար գաւառի Գովգ գիւղէն Գաւիթ Միլիտէրեանի կողմէ Թեհրան բերում:

**Մատենա և Աւետարան, կոչում թուի Մանուկ:** Կը բովանդակէ թղ. 4բ—17ա. Աղլուսակներ եւ կանոններ, թղ. 19ա—105ա. Մատթէոս թղ. 108ա—161բ. Մարկոս, թղ. 166ա—251ա. Ղուկաս, թղ. 255ա—318ա. Յովհաննէս, որուն վերջաւորութեանը չկայ «Իրք չնացեալ կնոջ»:

Յիշատակագրութիւնք. թղ. 318ա. «Փառք անսկզբնական բանին Աստուծոյ ընդ Հօր իւրում էակցին եւ մշտնջենաւորակից Հոգւոյն սրբոյ ճշմարտի...: Արդ, ով Հարք, եւ եղբարք, յորժամ ընթեռնուք զսուրբ աւետարանս եւ կամ տեսանէք, յիշեցէք ի Քրիստոս, զստացող սորա զխօջայ Դաւութն եւ զկողակիցն իւր զՄատեմ փառէն եւ զձեռքն իւր զՄէթն եւ զՊաւլոսն եւ զեղբարքն (չկան անունները, պատուում):»

Ծանօթութիւն. Ապա կը յաջորդեն նորագոյն յիշատակագրութիւններ, որոնց համաձայն 1900ին Յովակիմ եւ Ղազար Աւետարանը կը նորոգեն եւ կը վերաբերի «Յովհաննէս, Կարապետ եւ Պաշիկ Մեղիթէթ Ինչըրդուրեանց եւ Եղիա, Յովակիմ, Պօղոս Չօհրապեանց-Ինչըրդուրեանց եւ Հոսիսիմէի ի գաւառն Բորվարի հայաբնակ գիւղն Գովգ»: Յետոյ կը կցուին նորագոյն ստանաւորներ եւ սա տեղեկութիւնը՝ «1917 թուից յետ տիեզերք պատող թանկութիւնը զո՛հ տուեց շատերուն ցերեցան եղած եւ սուրբ Աւետարանի ծառայողներ էին Պր. Եղիա եւ Յովակիմ Չորարեանները մահ ճաշակեցին, հազիւ վերուած փոքր եղբայր Պօղոսը կենդանի մնաց չքաւոր վիճակում մաքուր ծառ(ա)յեց Ս. Թուի Մանուկ Աւետարանի, որի զօրութեամբ պահանջան եւ ապաւն լինի բոլոր ուղտաւորաց, սոյն անցքը կատարեց Բուրվարու գաւառ Սովգ հայաբնակ գիւղում Թ. 1917ին, որ ցորեն շահի լիար 30 դրան առատ տեղերում, ուր մնա քաղաքները, ա-

ղաչեցէք Աստուած հեռի անէ քրիստոնէից: 1927, Միջայէլ Տէր Գրիգորեան Նասրարաղ գիւղում: Չօհրար Եղիեայն ծնեալ է թիւն 1899 Սեպ. 10»: — Թղ. 9ա. կայ՝ «Աստուած, որ Մկրտումն տվեց թիւն. ՌեճիՉ ունի, փեւըրվարի Ժ. Ե.»:

**2.**

**Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն**

ԹՈՒՂԹՒՆ՝ 266: — ՄԵՏՈՒԹՒՆ՝ 26 × 20: — ԳՐՈՒԹՒՆ՝ Երկիւն, 19 × 6 + 6 = 12: — ՏՈՂՔ՝ 25: — ԹԵՐԹՔ՝ 62ամակում, 21: — ՆԻԹՔ՝ բուրբ, ողորկ եւ ընտիր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ, գործածութեմէ քիչ մը սեղսած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չունի: — ԿԱՁՄ՝ տախտակ, վրան սեւ կաշի կայցում, գծաւոր գարդեղով, փակակներն ինկած, կռակին գարնում գորշագոյն գորտուր կաշի: — ԳԻՐ՝ յստակ ու մեծ բոլորգիր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ առաջին տղայի կարմիր: — ՁԱՐԴԱԳԻՐՔ՝ շատ, ընտիր, գոյնզոյն, մարդագիր եւ կենդանագիր (բոլորագիր): — ԼՈՒՍԱՆՅԱՁԱՐԴՔ՝ բազմաբիւ, մին միւսէն աւելի գեղեցիկ, մարդ ու անասուն, գունեղ: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ չունի: — ԽՈՐԱՆՔ՝ ք. 12բ, 13ա, 13բ—18ա (աղիւսակի եւ կանոնք), ք. 20ա, 88ա, 132ա, 204ա (Աւետարաններու սկիզբը), գոյնզոյն, գարդաբուն եւ ճաշակաւոր: — ՆԿԱՐՔ՝ շատ, ք. 1բ, 2ա—2բ, 3ա—3բ, 4ա—4բ, 5ա—12ա (մարգարէներ ու Եւսեպիտներ), ք. 19ա (Մարտէոս), ք. 87բ (Մարկոս), ք. 131բ (Ղուկաս), ք. 203բ (Յովհաննէս), ամէնն ալ գունաւոր, գեղեցիկ ու յաջող (մեծ մասով): — ԴԱՏԱՐԿՔ՝ շատ: — ԺԱՄԱՆԱԿ՝ Ռ. Կ. Գ. (1614): — ԳՐԻՉ՝ Չափարիս վանեցի: — ՏԵՂԻ՝ Բաբաք գիւղ: — ՏԵՂԻ՝ Շաղոսկի: — ԿԱՁՄՈՂ՝ անյայտ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՒՆՔ՝ ք. 256ա—260ա եւն: — ՏԵՂԵԿՈՒԹՒՆՔ՝ կը գտնուի Թեհրան, բերում Գովգ գիւղէն:

**Մատենա և Աւետարան, ուր կան՝ թղ. 20ա—85ա. Մատթէոս, թղ. 88ա—121ա. Մարկոս, թղ. 132ա—200բ. Ղուկաս, թղ. 204ա—255բ. Յովհաննէս. Իրք չնացեալ կնոջ տեւը չէ զրուած: Յորջորջում է Չօրարուր Աւետարան:**

Յիշատակագրութիւնք. թղ. 356ա (գլխաւորը): «Յիշատակարանն է: Փառք անսկզբնական Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, սոյժմ եւ անզաւ յաւիտեան յաւիտեանից, ամէն: Սովորութիւն է աստուածային արանց միշտ եւ հանապաղ խոհեալ աստուծային պատուիրանս ի տըւէ եւ ի գիշերել, միշտ զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ:

Եւ վասն բազում պատճառի բազումք փափագին ջերմեանդ սիրով եւ յողձալի

ցանկութեամբ արդիւնայ եւ գործս կատարեալ: Նախ վասն յաւիտեանական եւ անմահ կենացն զանցաւորս արհամարհեն եւ զայն ստանան կեանս, որ մնացական է: Որպէս ասէ Տէրն Երթայք գործեցէք մի զկրտստական կերակուրն, այլ կերակուրն որ մնայ ի կեանն յաւիտեանականս: Երբորդ զի հրամայէ Տէրն, Գանձեցէք ձեզ զանձս ի յերկինս, ուր ոչ ցեցք եւ ուտիչք ապականեն եւ կամ գողք ական հատանեն եւ զողանան: Գրեմք զգիրս աստուածային, որ զամենայն զանձ եւ զամենայն բարիքն ի յինքն պարունակեալ ունի: Նախ զվերին իմաստութիւն եւ սպայ զամենայն սքանչելայգործութիւնս, որ ի սմայ: Երբորդ վասն անջինջ յիշատակութեան առաջի Աստուծոյ, որպէս ասէ մարգարէն, Երանի՛ որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընդանի յերուսաղէմ: Չորբորդ վասն քաւութեան եւ թողութեան մեղաց մերոց բաւեալս, որպէս ասէ մարգարէն՝ Չմեղս քո ողորմութեամբ քաւեսցես եւ զանարէնութիւն քո տրաք տնանդաց: Վասն ողորմութեան եւ զթութեան քրիստոնէից. Տէր Աստուած, զողորմութեան զրուուն բաց, լուր տառապեալ քրիստոնէայս: Յամէն զիմաց ենք մեք նեղած. ՚ւ ամէն ազգաց կոխան եղած. եկեղեցիք բազում քակած, բազում խաչերք(է) խորտակած, գիրք ՚ւ աւետարան գերի վարած, գիշեր ցերեկ մեք վարանած, ահայ բեկեալ եւ զարհուրած եւ ոչ ունիմք հանգստութիւն, այսպիսի կամք տարայկուծած եւ այսպէս եմք ի տարտարոս, որպէս զնաւս ի մէջ յալեաց, է սայ ամէն ի մեր մեղաց, որ բարկացար Հայոց ազգաց:

Ի թվականիս հայկազուն տաւմարիս ՌԾԳ ամին (1604) եւ փոքր թվականին Հոռմայեցոց Մ. եւ Ղ. ամին, ի ժամանակիս, յորում շահ Ապաս արքայն Պարսից եկեալ պաշարեաց զԹարեզ եւ կոտորեաց զարս Տաճկաց, քանզի զնացեալ էին Այլի փառէն եւ ամենայն զաւրս Տաճկացն ի Թաւրիզայ ի Նախջուանայ, ի յերեւանայ ի վերայ Ղազի բէկին ի Սարմաստ եւ ի դառնալն նոցա զամենայն սրայիտս արարեալ զնոսս եւ բազումք ի քրիստոնէիցն անդ կոտորեցին եւ առեալ զքաղաքն Գայէվրէժ եւ անցեալ զնացեալ ի Նախիջեան եւ անցեալ զնայ ի յերեւան եւ պաշարեաց զնա ամիսս Թ. եւ հարկի կացուցեալ էառ զքաղաքն. բայց չէ փոյթ մեզ երկարել զպատմութիւն մարտի պատերազմիս այսորիկ: Այլ եկեսցուք ի Թաւրէզ եւ

ասասցուք փոքր ի շատէ զնեղութիւնս եւ զչարչարանս քրիստոնէից ազգիս, թէ զի՛նչ եղեւ ընդ մեզ: Քանզի ել հրամանս արքայէն թէ ով ոք յաւժարեսցի ընակել անտի կացցէ եւ ով ոք ոչ յաւժարեսցի երթիցեն իւրաքանչիւր յիւրանց: Յայնժամ բազումք ի Հայոց եւ ի Տաճկաց յուղի անկեալ զնացին ի ճանապարհ զաւուրս Բ. իսկ անաւրէնս պարոնայք քուրդ ազգին զամենեւին զնոսա, զայրսն սպանեցին եւ զկանայսն եւ զտղայսն գերի աւարին եւ զայն տեսեալ հեղձ եւ ողորմեալ ազգիս Հայոց յաս եւ յերկրորդ կացաք ի տուէ եւ ի գիշերի լացին հանապազ, հայրք ի վերայ զաւակաց իւրանց միշտ եւ հանապազ վտարանդեալ կացին թէ զի՛նչ լինեցիմք: Յայնժամ ողորմածն եւ մարդասէրն Աստուած որ ոչ կամի զմահ մեղաւորին, արկեալ գութ ի սերտ արքային՝ ետուր հրաման Հայոց թէ Հայք ազառք են. բայց երթալու ումեք հրաման չկայ, թող որ կացցին աստի մինչեւ ի գարունն եւ յորժամ ի Մարտ ամիսն մտանցին՝ ամենեքեան ելեալ զնացին ի Շաւքաղաքն, որ է Ասպատան: Յայնժամ տառապեալ ազգս Հայոց զայն լուեալ ուրախացաք յուրախութիւն մեծ եւ փառս տուեալ Աստուծոյ աւրհնեցաք զարարիչն մեր եւ յորժամ եղեւ զարուն հրաման (ել) ի յարքայէն, զի զազգս Հայոց ի թիւ բերցեն եւ արարին զհամարք, իմացան՝ Գ. Ճ. Ռ. անձինք էին եւ տըւին նափաղայ եւ բերին ուղտք եւ այլ դաւարք թագաւորական եւ վերառեալ զազգս Հայոց բերին ի Ասպայհան. բայց ազգն Պարսից ոչ սիրեն զազգս մեր, այժմ այսպէս եմք եւ զապաղայն Աստուծոյ է միայն գիտել:

Այժմ ասասցուք թէ ի՛նչ եղեւ առ ազգս Հայոց, զի ել հրամանս յարքայէն, զի երթիցեն եւ գերեցեն զտունս Հայոց եւ զնացեալ գերեցուցին զկարս եւ զՇերակունիս, զԲասեն, զԿաղզուան, զԱղջաղալէն, զԱլաշկերտ, զԻսազսու, զԽնուս, զՄալազկերտ, զՏիբլիս, զՏումանիս, զՋաղար, զԱրդայեան, զԿոլայ, զՇաքի, զՇրան, զՇամախի, զԲանակ, զՓանկերտ, զՅուլախի, զՄամբլան, զԹաւնիտուն, զՍեպեր, զԹէրջան, զԿամախ, զՎան, զԱրճէշ, զԱրճիէ, զԲերկրի, զՍուտան, զՋարիշատ, զԵրեւան, զՆախիչուան, զՋուղայ, զԱղբակ, զՄարմաստ, զԹաւրէզ, զԻանջայ մինչեւ ի Դամուրխափու: Եւ այլ բազում գեաւղ եւ քաղաք, զոր ոչ կարեմք ընդ գրով արկանել, զի ի Դարէվրէժու եւ ի Թէնդորոյ պաւլիս, որ Արգոնով կոչին ան-

մարդայրնակ արարին եւ Երեւանաց մինչեւ ի Թարւէզ ԿՌ. գերի արարին, թող զայն եւ զոմանս սրոյ խախոհ արարին, զոմանս սովալուկ, զոմանս զետայհեղձ եւ զոմանս բըբայհեղձ եղեն, զոր ոչ կարեմք ի թիւ բերել եւ համարել: Այլ Աստուածն որ ստեղծեալ է, նայ բովանդակէ զնոսա: Չի դամենայն աշխարհն Հայոց աւրեցին եւ գերեցուցանելով այրելով եւ սպանանելով եւ զայն տեսաք խաւարեալ աչաւք մերովք եւ խոր խոցի սիրտ մեր եւ զալարին աղիքն մեր, զի այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց, բայց ճար չունիմք քան զՔրիստոս, փառք բերապատիկ նմայ, զոհութիւնս յաւտեանս ամէն:

Արդ գրեցաւ եւ նկարեցան եւ կազմեցաւ սուրբ եւ հրաշալի եւ զքանչեւայգործ աւետարանութիւնս Ռ. եւ ԿԳ. թուին հայկազեան տումարին եւ Հոռոմայեցոց թղին ԳՃԲ. ամին ի յաշխարհս Պարսից ի յերկիրս Գանդամանայ, որ է Հուքմն Ասպայանայ, ի գեաւղս Քաթաք, ի դուռն Սուրբ Աստուածածնին: Չեռամք Չաքարայ երկոյ Վանեցոյ: Արդ ցանկացող եղեւ սուրբ աւետարանիս հաւատարիմ եւ Աստուածայտէր կինն Շաղոսկի եւ ստացաւ զանանց մեծութիւն յարդեանց իւրոց, ետ նկարել եւ երանդ երանդ դուռով զարդարեալ զսուրբ Աւետարանս հաւատարիմ կինն Շաղոսկի յիշատակ իւր եւ ծնաւոյց իւրոց հաւերն Բահանդուռին եւ Մաւրն Փաշաճանին եւ իւր կողակցին Մերգին եւ որդւոյն Կիրակոսին եւ միւս որդւոյն Սարգսին, եւ միւսոյն Աւաքին եւ զստեբացն Դաւաթին եւ ամենայն արեան մերձաւորացն առհասարակ ամէն: Դարձեալ յիշեցէք զառաջ յիշեցեալսն ի Քրիստոս զՇահոսկինն եւ զեղբարքն զՊապիկն եւ զՄկրտիչն եւ զՄերգին եւ զիւր ամենայն մերձաւորսն առհասարակ, զորս յիշեցաք եւ որք մնացին յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ ամէն: Այլ եւ յիշեցէք ի մարբայփայլ յազաւթս ձեր զանախտան զժողոս եւ զծնաւաղքն իմ զոքէր Յովաննէան եւ զՈւլուխաթունն եւ զկողակցին իմ զՄահմուտ խաթունն եւ զքեռինն իմ Չարիջանն եւ զաշակերտն իմ զՄելքոնն եւ զհոգեւոր հայրն իմ զՏէր Յակոբն զուսուցանող գրիս եւ արուեստիս: Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք եւ Աստուածն որ առատն է ի տուրս բարեաց ձեզ յիշողացն եւ մեզ յիշեցիոցն առհասարակ ողորմեսցի ի միւս

անգամ զալստեանն իւրում ամէն: Հայր մեր որ յերկինս ես:

Թղ. 360ա. «Յիշեցէք զՄերգի ծնաւոյնս զհայրս Բէկազին եւ զմայր Խաղբէվարդան եւ զոքէր Խաշատուրն, զոքէր Մելքեպէթն, Բարսեղն, Ամիրն, Ընդստակէն, Ամիրջանն, Ամիր բէկի ծնաւոյնս, զպապն Չուզրիկն, հայր Վերապուտը, Ամիրբէկին կողակցն Այաւսուլթանն, զըստերքն Թանկխաթունն, Եղիսարէթն, Անթառանն, Կարիանէն, Քրիստոսաուրն, Մերուսն, Ուլուբարէն, Ամիրբէկին, քուրն Եղսապետն, զՍալոսն, զԻրակոսն, զՈւրբուրեկն, զՉալն, զՅակոբջան, զՍարգիսն, զՈւլբէն, զԽորամջան, զԽալազեղն, զՋանդուլի:

Թղ. 355բ. (նախ՝ Ծածկազիր, ապա տարրեր գրով). «Գրեցաւ, նկարեցաւ, կազմեցաւ սուրբ եւ հրաշափառ եւ հրաշազարդ եւ հրաշալի աւետարանս ի ՌԿԳ թղին հայկազեան տումարի եւ Հոռոմայեցոց փոքր թղիականին Մ. Ղ. Բ. ամին՝ եւ մեծի թղին ՌՊՃԿՁ ամին ի դառն եւ ի նեղ ժամանակս, որ թաղաւոր մի ի Պարսից եղեայ(լ) Շահ Արաս անուն եւ զաշխարհս Հայոց աւերեաց եւ գերայցուցանելով, այսպէս եմք ի տառապանս եւ զապաղայիցն Աստուծոյ միայն է գիտել: Չեռքս զնայ, տեղն երեսայ, մարմինս փտեալ փոշի դառնայ, սայ յիշատակ ի ձեզ մնայ, թէպէտ խոշոր է զիւր սորայ, այլ զիւրընթեանի գիտեայ երբոր բանաս կարգաս զսայ, միտերան զզժողոս յիշեայ»:

Թղ. 121ա. «Գրեցաւ, նկարեցաւ եւ կազմեցաւ սուրբ եւ հրաշալի եւ սքանչելայգործ Աւետարանս ձեռամբ Չաք(ար)այ անարժան վանեցոյ երեցոյ ի յաշխարհս Պարսից ի յերկիւս Գանդամանայ. որ է ի Հուքմն Ասպայանայ ի գեաւ(ւ)ս Քաթաք, ի դուռն սուրբ Աստուածածնին, ՌԿԳ թղին (ապա ծածկա(ւ)ութիւն):

Թղ. 85ա. Յիշեցէք ի Քրիստոս զստացող սուրբ Աւետարանիս զհաւատարիմ կին զՇահոսկինն եւ զկողակցին իւր զՄերգին եւ զազգայն իւր զԿիրակոսն, զՍարգիսն եւ զԱւաքն եւ զըստերն զԻւլուխաթին ու զամենայն արեան մերձաւորսն, յիշեցէք եւ զՇահոսկու եղբարքն զՊապիկն, զՄկրտիչն, զՄերգին եւ զննջեցեալսն առհասարակ, որք

<sup>1</sup> Հոռոմայեցոց փոքր թուականն է վրական տմարի 779 + 292 = 1071. որ բլլալու է զապափարօրինակին գրութեան տարին. «մեծի թղին ՌՊՃԿՁ», իմացի 1886 — 753 = 1113 փրկչական:

յիշեցաք եւ որք մնացին եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ զալստեանն ամէն: Գրեցաւ Ռ. եւ ԿԳ թլին եւ Քրիստոսի փառք յաւտեանս ամէն:

Թղ. 200ա. Յիշեցէք ի Քրիստոս զհաւատարիմ կինն զՇաղոսկինն, որ ստացաւ զսուրբ Աւետարանս յիշատակ իւր եւ ծնողացն Բահանդուռին եւ Փաշաճանին եւ կողակցին Մերգին եւ զաւակացն Կիրակոսին, Սարգսին, Աւաքին, զստերն Դաւաթին եւ Շաղոս կղբարց, Պապիկին եւ Մկրտիչն, Մերգին եւ ամենայն արեան մերձաւորացն առհասարակ ամէն. զըբցաւ Ռ. եւ ԿԳ թղին: Չեռամք Չաքարայ երկոյ յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ զալստեանն, ամէն:

Թղ. 129ա. (տարրեր գրով) Չեռքս զնայ տեղն երեւնայ, մարմինս փտեալ փոշի դառնայ, զիւրս յիշատակ նաեւ ձեզ մնայ, թէպէտ խոշոր է զիւր սորայ, այլ զիւրընթեանելով գիտեայ, յերբ բանաս ընթեանուս զսայ միտերան զզժողոս յիշեայ, թէ զանունն անգիտես, ինդրես նայ Չաքայ է քեզ ծառայ: Ով ինձ ասէ մի ողորմի, Յիսուս Փրկիչն իւր ողորմեայ եւ պարգեւէ զանանց բարին որ յաւտեանս երթայ մնայ, ամէն. Հայր մեր (ապա բնաղբին գրով) «Յիշեցէք ի սուրբ յաղաթս ձեր զհաւատարիմ կինն զՇաղոս(կ)ին եւ զծնաւաղքն իւր զԲահանդուռն եւ զՓաշաճանն եւ զայրն իւր զՄերգին եւ զորդիքն զԿիրակոսն, զՍարգիսն եւ զԱւաքն, զըստերն զԴաւաթին եւ զեղբարքն զՊապիկին, զՄկրտիչն, զՄերգինն եւ զամենայն ննջեցեալսն առհասարակ յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշէ ի միւսանգամ զալստեանն: Հայր մեր, որ յերկինս ես...» (Կան դեռ շատ նորագոյն շեղագիր յիշատակագրութիւններ՝ թղ. 13ա, 5բ, 6ա, 85բ, 130ա):

**3.**

**Ս Ի Ե Տ Ա Ր Ա Ն**

ԹՈՒՂԹՒՔ՝ 284: — ՄԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 8 X 14: — ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ 12 X 8: — ԿԱԶՄ՝ խաւափարտ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ պահուած: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ՆԿԱՐՔ՝ 23 հատ, զայնգոյն, ոսկին շապլուած: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՒՔ՝ ծաղկանկարներ: Բոլոր գրութեան սկզբնատառերը բնագիր եւ անբոլոր համարները սկզբնատառերը ոսկեգոծ: — ԳՐԻԶ՝ Յակոբ: — ՏԵՂԻ՝ Կ. Պոլիս: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌԶԳ (1634): — ՍՍԱՅՈՂ՝ Մեղիտուն:

Մատենա է՝ Աւետարան եւ ունի հետեւեալ Յիշատակագրութիւնները՝

Ա. Յիշատակարան:

«Փառք անմահի եւ անվախճան փառաց թագաւորին Քրիստոսի, արարածոց փրկաւորին եւ տիեզերաց զանճառ խնդու-թիւն աւետողին եւ հաւրն զնա անճառ ծնաւորին եւ անպատում բղխելոյն ի նրմանէ հոգւոյն սրբոյ անանջատական էութեան եւ միապետ եռանճնականութեան: Որ յանկ հանել հիւժեղոյն յանցանօք ետ զաւրութիւն անպիտան եւ մեղաւոր զբազրիս Յակոբի ա-նարժան եւ սուտ անուն սարկաւազի, զմարդ-կան անճառ Բանին հաւր. բանք տնաւրէնու-թեան, զխոնարհութեամբ անպատում իջումն ի հաւրէ ծնանելով ի սրբոյ կուսէն Աստուած եւ մարդ միացեալ ուր եւ շնորհաւք սրբոյ հոգւոյն մարմնով աճեալ զարգանայր կատա-րեալ գոյ աստուածութեամբն, մկրտելով յԱմբողջոյն առնելով զհրաշս աստուածա-վայելուչս, ընդ հոգւոյն եւ մարմնոց ախ-տարութելով եւ ապա չարչարանաւք եւ խա-չին եւ յարութեամբ կենաց լեալ մեզ երաշ-խաւոր եւ Համբարձումին յերկինս զբնու-թիւնս առաջին փառն վերաթեւեալ եւ հոգ-ւոյն առաքմամբն ի դուռս առաքելոցն զմարդ-կան ընդ Աստուած միութիւն յայտնեալ, յո-րոյ զաւրացեալ եւ լցեալ անճառ զիտու-թեամբ չորքն աւետա... զայս ամենայն զրով աւանդեցին աշխարհի:

Որոց աստուածամուկ բանից զբել ար-ժանի արար զիմ անարժանութեանս: Քանզի սկսեալ կատարեցի զգիրս աւէտ անուն ի թվականիս Հայոց ՌՁԳ (1634):

Գրեցաւ սուրբ աւետարանս ի մայրաքա-ղաքս Ըստամպուլ, ընդ հովանեաւ սուրբ Նիկողայոսի եկեղեցւոյն. ի հայրապետու-թեան տեառն Փիլիպպոսի Հայոց կաթողի-կոսի:

Արդ աղաչեմ զամենեսեան, որք աւկտիք ի սմանէ եւ կամ ընդաւրինակէք, յիշեցէք զՄահադասի Մելքուն, որ է սա ի գաւառէն Գոգթան. ի գիւղէն որ կոչի Ագուլից Դաշտ, որ ստացաւ ոսկեզաւծ աւետարանս եւ ետ յիշատակ իւր հոգւոյն ի դուռն Թումայի սուրբ Առաքելոցն, որ այժմ կոչի երեքսո-րան, յիշատակ իւրն եւ ծնաւդաց իւրոց, զհայրն իւր զտէր Մարտիրոսն եւ զմայրն զՓարի խանն եւ կողակիցն զՍաթուրն եւ զորդիքն զՋլաւխանն եւ Աւետիքն եւ զզատերքն զԼապիխանն եւ Սապրիխանն եւ հանգուցեալ որդիքն Բ. Եսափրիխանն եւ բերն իւրոյ

զՍուլթանն եւ զիւր հայրենի պապն զտէր Յովսէփն եւ զմամոյն իւրոյ զՄելիքն եւ զիւր հաւրեղբարքն զԱնտոնն զՊարսամն. զԹէո-դոսն եւ զիւր ամենայն արեան մերձաւորք ընդ նմին եւ զանարժան զՊետրոս (բառ մը ջնջուած), որ ծաղկեցի այս սուրբ աւետա-րանս:

Յիշեցէք ի Քրիստոս եւ զմեղաց իմոց թողութիւն խնդրեցէք:

Եւ որ յիշէ զմեզ եւ սրտի մըտաւք թո-ղութիւն խնդրեցէք, նա՛ ընդ միոյն հա-րիւրապատիկ առցէ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ որ է ա(ւ)ծեալ յաւիտեանս ամէն:

Ծանօթութիւն. — Մարկոսի աւետարանի սկիզբը գրուած յիշատակարանն եւս միեւ-նոյն բովանդակութիւնն ունի. ուր յիշատա-կուած է «ձեռամբ անարժան Յակոբին»:

Բ. Յիշատակարան:

Նաեւ զվերջին ստացողն սաէ փայլ (ոս-կեփայլ) եւ լուսատիւ ծաղկալից մեռելայա-րոց սրբոց աւետարանիս, Ժամխարանց մահտեսի Յովհաննէսի թոռնակն, օրհնեալ թոռնակն մեծաշուք իշխանն, խրճա Յոհան, որի ՌՄՈԲին, ի նեղ եւ ի դառն ժամանակիս բազում տենչմամբ եւ ջերմ սիրով ետ ի դուռն Խնդիրկատար կոչեցեալ սուրբ Աս-տուածածնայ. անջինջ յիշատակ հոգւոյն իւրում եւ բարեպաշտ ծնողացն իւրում Սա-ֆարին եւ Ջարիֆին եւ հարազատ եղբայրցն իւրոց Կարապետին, Մալխասին, Սահակին եւ որդեկին իւրում Յակոբին եւ կողակցոյն Ջարիֆին, եւ ամենայն արիւնառու մերձա-ւորաց իւրոց:

Արդ՝ այս օրհնեցեալն յԱստուծոյ զամե-նայն աւուրս կենաց իւրոց մտածելով զա-սածս մարգարէին, որ սաէ, Երանի որք յի-շատակ ունին ի Սիօն: Վասն զի գիտէր եւ նա թէ ամենայն ինչ ընդունակ է առաջի Աս-տուծոյ յիշատակ ի սէր սուրբ յեկեղեցոյն. բայց զերասանութիւն սրբոյ աւետարանիս առաւել գոյ քան զբնաւս: Ուստի ի հալալ վաստակացն իւրոց գիրաւուսն? . ըլձ (այս-տեղ երկու բառ ջնջուած) ի սիօն մօրս մերոյ սուրբ եկեղեցւոյն Խնդիրկատար սրբոյ Աս-տուածածնայ, որ եւ ճշմարտապէս գիւրն-գրե (? ) մեր կատարէ:

Արդ թպ. դնեցին ոմանք ի ներ վանօրէից բազում յիշատակ: Սակայն գերափառ քան զամենայն սուրբ աւետարանն է, վասն զի

զերասպատուութիւն սորա յայտ անտի է ի յընթեռնուչն բոլորիս բացազուլս կանգուն գորով ենթարկելով զլսելիս մեր ոսկեվանկ եւ կէնատու բանիցն նորա, ըստ որում ինքն վասն իւր ի զիրան սուրբ վայելչապէս ա-ւանդեաց մեզ «ես եմ կեանք եւ ես եմ լոյս եւ որ դա սուխ մի մնացէ խաւար»:

Վասն զի արդար եւ կեանք է յաւիտենա-կանապէս եւ լոյս աչաց մերոց հոգւոց: Քանզի սորա ենթակացէլէ մայրս մեր սուրբ եկեղեցի եւ սովաւ ամենայն ինչ կատարու-նազործի, այսինքն եօթն խորհուրդ սուրբ եկեղեցւոյ: Սովաւ պարծի հարան Քրիստոսի եւ սաէ հաւ եւ մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած, վասն որոյ սովաւ ծնանի բազում ուստերս եւ դստերս եւ ընծայէ, Աստուծոյ ըստ այնն? (այնմ) աւետարանաւ ծնոց (? ) զձեզ:

Բայց արդ այսպիսոյ աստուածայնոց տե-սութեանս, այսպիսոյ զերանշուլիականն?, այսպիսոյ սառնորակ՝ սառնորակ եւ եղեմա-րուղիս քառավտակաց, որ ծաւալեցաւ ի ծագս տիեզերաց քարոզութեամբ սրբազան սուրբ առաքելոցն եւ արբուցեալ զովացոյց զտախանձ եւ զծարաւ հոգիս մեր:

Այսպիսոյ ոսկեփայլ աղաւնոյ, որ սա-ւառնաթուիչ եւ նեոասուրաս ոստմամբ (ջնջուած) ի պորտս տիեզերաց, եկեղեցիս Հայաստանեաց (երեք բառ ջնջուած է), այս-պիսոյ անսպառ հրճուանաց, որ անդ է քան զամենայն միւլիթարութիւն արտաքսականաց:

Արդ՝ ովոք իցէ, որ ոչ տենչասցի եւ փա-րազիցէ: Ովիցէ, որ ոչ ստոյրեալ կիզի հո-ղեւորապէս ի բաղձանս եւ ի սէր սուրբ: Արդարեւ ոչ ոք, բայց թէ՛ հեթանոս իցէ եւ հրէսայ:

Ուստի վերոյգրեալ օրհնեալ իշխանն բա-զում. սիրով խանթակաթ բաղձմամբ ցան-կացաւ ոսկեփայլ խնկելի տիրս. եւ ետ յի-շատակ հոգւոյն եւ ծնողացն եւ համայն ննջե-ցելոցն իւրոց:

Արդ՝ յընթեռնուչն եւ կամ ի զայլիչն (?) զարմանալի ոսկիածոր ծաղկանց եւ ոսկէ-նկար պատկերացն եւ չքնաղ տեսութեան սրբոյ աւետարանիս, յիշեցէք ի մարտեր յաղթս ձեր զվերոյիշեալ իշխանն, համայն ննջեցե-լովքն իւրովք եւ Աստուած ողորմեսցի ա-սասջէք եւ դուք յիշեալ լիջէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, ամէն:

Ծն. Աննպաստ պարագաներու հետեւան-քով այս եւ յաջորդ ձեռագրին (Շարակնոց)

ցուցակադրութիւնները շատ պակասաւոր են: Կը պատկանին Թեհերանարնակ Տիար Ալ. Մովսէսեանի, եւ այժմ կը գտնուին Ամերիկա վաճառուելու համար (B. Movsessian, Bar-kara Road 775, Oacland 10, Calif. U. S. A.):

4.

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

ԹՈՒՂԹՒՔ՝ 339: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 13 X 9.50: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 10 X 7: — ՆԻՒԹ՝ մագաղաք, ըն-տիր: — ԿԱԶՄ՝ տախտակ կաշեպատ եւ ամուր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ պահպանուած: — ԳԻՐ՝ բո-լորգիր, յսակ եւ սիրում: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ սկզբնա-տառերը քաչկազիր եւ ոսկեգօծ: — ԼՈՒՍԱՆՑԱ-ՋԱՐԴԻՔ՝ շատ եւ փոխ: — ԳՐԻՉ՝ Սարգիս: — ՏԵՂԻ՝ Սիս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 22Բ (1333): — ՄՏԱՅՈՂ՝ Յա-կոբ իշխան քահանայ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ ԲՂ. 339ա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ հմմտ. աստ Թ. Յ. Աւետարանը:

Մատենա է՝ Շարակնոց:

Յիշատակագրութիւն. 339ա. «Փառք ա-մենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ ամենասուրբ Հոգւոյն, ամէն: Գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ Սարգիս բազմա-մեղ քահանայի ի մայրաքաղաքս Սիս ընդ հո-վանեաւ սուրբ Հոգւոյն ի լաւ եւ յընտիր աւրինակէ, որ կոչի (անունին տեղը բաց ձգուած է): Ի խնդրոյ պատուական քահա-նային Յակոբայ, որ մականունն իշխան կոչի եւ զեռարոյս սարկաւազին Կոստանդինի ի վայելումն անձին եւ ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնաւդացն ի թուարբրութեան Հայոց 22Բ (1333) ի թագաւորութեան Լեւոնի բարե-պաշտի որդւոյ արքային Հայոց Աւչնի եւ ի հայրապետութեան Տեառն Յակովբայ: Արդ աղաչեմ զամենեսեան որք աւգտիք ի սմանէ եւ կամ ընդաւրինակէք յիշեցէք ի սուրբ յա-զաւթս ձեր զպատուական քահանայն ԿՅա-կովբ եւ զզեռարոյս հոգեւոր որդին իւր Կոս-տանդին եւ զծնաւդսն իւրեանց, որ ստացաւ զսա յարգար վաստակոց իւրոց, ընդ նմին եւ զիս զանարժան զՍարգիս սուտանունն քա-հանայ եւ զծնաւդսն իմ զԳրիգոր քահանայ եւ զՀեղինէ եւ զՋոյրն իմ Թեֆանս զգնա-ցեալսն առ Քրիստոս եւ զամենայն ազգայինս իմ զկենդանիս եւ զհանգուցեալսն. զի յոյժ աշխատանաւք գրեցի եւ ոսկով եւ ծաղկիւ եւ պատկերով զարդարեցի զսա եւ որ զմեզ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, ամէն:

5.

Շ Ա Ր Ա Վ Ն Ո Ց

ԹՈՒՂԹՒՔ՝ 333: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 12 X 9: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 8.5 X 6: — ՏՈՂՔ՝ 20: — ՆԻԻԹ՝ մագաղապ բարակ ու նուրբ եւ ամուր: — ԹԵՐԹՒՔ՝ 30, նշանակուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ, սակայն քղբեր կազմէն բաժնուած եւ սեւցած, նախ ինկած եւ կտրուած: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չուցի: — ԿԱԶՄ՝ տախտակ, վրան կաշի եւ ապա լաք քաշուած: — ԳԻՐ՝ բոլորագիր, գեղեցիկ ու փոքր եւ վրան լաք: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ շատ ու պարզ: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՐՔ՝ միջակ եւ գոյնգոյն: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ քղ. 25ա, 201ա, 220ա, 262ա, 280ք, 303ք. պարզ բաներ: — ԽՈՐԱՆՔ՝ քղ. 97ա, 122ա, 168ա, պարզ բաներ: — ՆԿԱՐՔ՝ չուցի (քղ. 121ք՝ մեխանով քաղաղի մը): — ԴԱՏԱՐԿՔ՝ չկայ: — ԺԱՄԱՆԱԿ՝ ՌՃ (1651): — ԳՐԻԶ՝ Դաւիթ: — ՏԵՂԻ՝ Շօշ (Հագարքերեայ գիւղ): — ՏԵՐ՝ Գրիշը: — ԿԱԶՄՈՂ՝ անյայտ: — ԿՆԻՔ՝ չկայ: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 24ա, 179ք, 333ա—բ: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ կը գտնուի Թեհերանի Պր. Մ. Բօլտանեանէ ինձի ներկայացուած:

Մատենան է՝ Շարակնոց, ընտիր եւ խաղերով օժտուած. սկիզբը պակաս, կը սկսի թղ. 1ա. «Որ ծնանելոցն է ի քէն Իսրայէլի առաջնորդ եւ ընդհանուր քարոզի Աստուած հզօր անմահ բան»: Թղ. 25ա. «Կանոնի Տեառնընդառաջի» թղ. 97ք. «Կանոնի Ղազարոյ յարութեան» թղ. 122ա. «Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն անմահ» թղ. 168ա «Կանոնի Պէնտէկոստէի». եւ այսպէս յառաջ:

Յիշատակագրութիւնք. Թղ. 24ա. «Ով եղբարք մանկունք եկեղեցոյ յորժամ երգես զշարականս եւ զուարճանաս հոգևով եւ մարմնով աղաչեմ զձեզ յիշեալ, զսուտանուն Դաւիթ քահանայս որ անուամբ միայն եմ եւ ոչ զործով եւ թողութիւն հայցեա մեզաց իմոց ի Քրիստոսէ... (տարբեր գրով) յիշեցէք զՏէր Ստեփանոսն»:

Թղ 50ք. (տարբեր գրով) «Այս շարականս Դաւիթ քահանայիս եւ որդին տէր Թաթէոս եւ թոռն տէր Ներսէսն, թիւն ՌՃԿ Կարապետ Նիկողոսեան ի Հօսոգարգիոր 1219 ՌՅԻԸ»:

Թղ. 95ք. «Մեղաւք եղկելիս ուամիկ եւ զերիս անպիտան Դաւիթս աղաչեմ, ով երգողք ասել ողորմեա ինձ եւ ծնողիս տէր Թաթէոսիս, մօրս Հոնիսիմէի եւ պապոյն իմոյ տէր Դաւթի: Յիշողք յիշեցիք»:

Թղ. 96ա. (տարբեր գրով). «Յիշատակ է Շարակնոցս տէր Ահէքսանդրին եւ ի Քրիստոս հանդուցեալ Վաստիան, եւ պապին իմ հանդուցեալ տէր Ներսէսն եւ կողակից իւր Փերիխանն եւ ծնողն իմ ի Քրիստոս հանդուցեալ տէր Բաղդասարն եւ կողակից իւր Թուխիկն եւ հանդուցեալ եղբարցն իւր Ներսէսն եւ Մենասն եւ Վերքինն, Մասէն, Նունիկն, Ուստիանէն, եւ ի Քրիստոս հանդուցեալ որդիք իմ ափեղա տէր Մկրտիչն, Ներսէս եւ Ռհանէս եւ կենդանիքն իմ Ստեփանոսն, Մարիէս (?)»:

Թղ. 96ք. (տարբեր գրով). «Յիշատակ է Շարակնոցս Տէր Ներսէսին»:

Թղ. 96ք. «Յիշատակ է Շարակնոցս տէր Ներսէսին, եւ կողակիցին իւրոյ Փերիխանին եւ որդին Դաւթին եւ միւս որդին նորընծայ Բաղդասար ժամարարն յիշեցէք եւ զուր յիշեալք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, զերեցաւ թուին ՌՃԿ մարտի ամսի Ի. ունի վերջ»:

Թղ. 143ք. «Զմեղսամած Դաւիթ զրիչս յիշեալ»:

Թղ. 167ա. «Ով եղբարք երգիչք երգարանին յորժամ երգես զշարականս եւ զուարճանաս հոգևով եւ մարմնով, յիշեալ զանպիտան զրիչս եւ Եթ եւ լով անուն Դաւիթ երէցս, որ անուամբ միայն եմ եւ զործով թափուր: Տրտում անձամբ զբեցի զսա որ յոյսմ ամին թվին ՌՂԸին եւ ի յիմ մեղացն Աստուած բարկացաւ եւ էք մահ սարժամ ի յերկիրս Փարիոյ Բուրվարոյ ի գիւղն իմ, որ բնակեալ էին Հ. տուն, որ եւ մեռան ձ եւ Ծ հողիք. ա. քահանայ աշակերտ եւ ընկերակից մեր որ եւ Քրիստոս զիւր մեղքն թողցէ, եւ ի յոյսմ ամի ընդ նոսա մեռան եւ որդիքն իմ զաչացս լոյսք սարկաւաք Ներսէս ջանն եւ զՎաթանջանն եւ նորարոյս Ոսկանն եւ զստերքն իմ Դշխուհին, Ոսկի ծաղիկն, որ եւ Տէր Աստուած անթառամ պտակօք պտակէ գամենայն: Բարեբարն Աստուած ողորմածն զթածն եւ զարձեալ ողորմեցաւ եւ ետ միխիթարութիւն ինձ եւ կենակցին իմոյ Մարիամին նորընծա աղա: Աղաչեմ զձեզ, ով եղբարք, որք հանդիպէք յիշեալք զվերոյ զրեարս եւ Աստուած ողորմի ասացէք»:

Թղ. 167ք (տարբեր գրով). «Յիշատակ է Շարականս տէր Աղեքսանդրի որդի տէր Ստեփաննոսի որդի եւ իւր որդիքն տէր Աստուածայտուրն, Մարտիրոսն, Գրիգորն եւ ամենեցուն ծառայող ծառայ տիրացու Մելիքս»:

Թղ. 173ք (տարբեր գրով). «Այս յիշատակն զբեցի եւ Մկրտիչ Եսայիեան, Չարթաղ, Փետրվար 30, 1922»:

Թղ. 173ք. «Եղբարք անմեղադիր լեռուք, զի այս բ. հարցս իւր աւրինակն չկայր վասն որոյ ի յոյս տեղս զբեցան, դու իւր տեղն ասայ եւ զմեղաւոր Դաւիթս յիշեալ...»:

Թղ. 194ա. (տարբեր գրով). «Այս հիշատակ զբեցի եւ Թեհմուր Ա. Գրիգորեան ի Չարթաղ Փետրվար 1924»:

Թղ. 333ա. «Փառք... որոյ ամենատառ շնորհիւն յանկեալ կատարեցաւ զբնագրութիւն շարական կոչեցելոց ի ցնծութիւն եկեղեցոյց Հայաստանեայց մանկանց հետեւելոց: Դրեցաւ եղանակաւոր տառս Շարականաց ի թուարեութեան Հայոց ՌՃ. ի յաշխարհիս Պարսից արքայանիստ քաղաքիս Շօշ կոչեցելոց ըստ գրոց որ այժմ Ասպահան արտաձայնի ի յերկիրս Փարիոյ ի գեղջիս Հագարջրեայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի ժամատանս ի թագաւորութեան փոքր Շահապասին եւ ի զիտարեութեան Հայոց հանուրց սեռի Տեառն Փիլիպպոսի երանեալ Հայրապետի եւ ի վերատեսչութեան նահանգիս ընդհանուր Պարսկաստանի հեղահողի արքեպիսկոպոսի եւ շնորհագարդ վարդապետի Տեառն Սիմէոնի: Ընդ սրբոյ երջանիկ հարցս մաղթեմ յիշել զսոսի եւ Եթ անուն Դաւիթ քահանայս, որ զծագրեցի զսուրբ ծաղկաւէտ բուրաստանս յիշատակ անջինջ հողոյ իմոյ եւ ուրախութիւն մարմնոյ եւ հաւրն իմոյ Թաթէոս քահանայի եւ մաւր իմոյ Հոնիսիմէի եւ կենակցին իմոյ Մարիամին եւ կողարց իմոյ Աղէքսանոսին (?) եւ կողակցին սորոյ Աւղլան փաչէն եւ հանդուցեալ եղբարն իմոյ Ներսէսին եւ քրեւրց (անուն մը անընթեռնելի) Աղիգատէն (?) Մարիամն, թագուհին Եղիսարէթն: Եւ ուստերքն իմ հանդուցեալ ի Քրիստոս, զՆերսէսջան, Վաթանջան եւ Ոսկանն եւ զգոստերքն իմ Դշխուհին, Ոսկեծաղիկն եւ ամենայն արեան մերձաւորացն եւ որք զողորմի ասէք. ամէն»:

6.

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

ԹՈՒՂԹՒՔ՝ 291: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 16 X 11: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 10 X 7: — ԹԵՐԹՒՔ՝ նշանակուած 25, իւրաքանչիւրը 12 քուղք: — ՏՈՂՔ՝ 15: — ՆԻԻԹ՝ քուղք փայլուն եւ դեղնագոյն: — ԿԱԶՄ՝ տախտակի վրայ կաշի զարմուած, փակամբներն ինկած: — ՄԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չուցի: — ԶԱՐԳԱԳԻՐՔ՝ շատ պարզ, գոյնգոյն նաշակաւոր, ցեցակեր: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ բաւական լաւ, քիչ մը ցեցամէս, մաշած ու սեւ: Բայց քանի մը քուղք պատուած եւ նախ տեղէն ելած եւ այլուր դրուած, սկիզբը եւ վերջը քերի: — ԳԻՐ՝ բոլորգիր յստակ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմրագիր, պարզ ու աղուոր: — ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԳՐՔ՝ պարզ, հասարակ: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ քղ. 15ք, 48ք, 121ք, 163ա. սովորական բաներ: — ԽՈՐԱՆՔ՝ չուցի: — ԴԱՏԱՐԿՔ՝ քղ. 15ա, 18ք: — ԺԱՄԱՆԱԿ՝ ժե. դար: — ԳՐԻԶ՝ Սահակ: — ՏԵՂԻ՝ անյայտ: — ՄԱՂԱՅՈՂ՝ անմանօք: — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ՝ քղ. 48ա: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ՝ Սեպիակնուրիւն քեհերանաբնակ վարժապետեան ընտանիքին:

Մատենան է՝ Սաղմոսարան, որ թէեւ լաւ ձեռագիր է, սակայն սկիզբէն եւ վերջէն պակասաւոր թերի: Կը սկսի թղ. ա. «Տեառն է փրկութիւն ի վերայ ժողովրդեան քո աւրհնութիւն քո: Տունք Ը. Գուրգայս Սաղմոսի Դաւթի, ի կարգալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան»:

Թղ. 272ք. «Աւրհնութիւն Դանիէլի Մարգարէի. Աւրհնեալ եւ տէր Աստուած հարցն մերոց»: Թղ. 277ա. Մեծացուցէ եւն: Թղ. 283ա: Տէր ամենակալ: Թղ. 287ա. «Հաւատով խոստովանիմ» սկիզբն ու վերջը պակաս: Եւ այնպէս կը վերջանայ գիրքը:

Յիշատակագրութիւնք. Թղ. 48ա. «Եւ զիս զանպիտանս զրիւր շարեաց պարտապանս զՍահակ զրիչ յիշեցէք միով Հայր մեղայիս»: Թղ. 162ք. «Զմեղաւք զառածեալ զրիչս աղաչեմ յիշել միով Հայր մեղայիս»:

(Շարունակելի): Հ. Հ. ՈՍԿԱՆ